

ի տանարն ըրած այցելութեան միջոց հան-  
դիպածները. սակայն տիկինն իմացուց իրեն  
թէ ժամանակն ուշ էր, միանգամայն խոս-  
տանալով որ յաջորդ օրը Անիկեասոսի հետ  
իրեն այցելութեան երթան:

Մանկամարդ քրմուհին հեռացաւ՝ շատ  
զոհ այն խոսամունքէն. սպահ մի յետոյ Գո-

միտիլա եւ պիտուր դռնէն դուրս կ'ելնէր՝  
իւր պատգարակը երթալու համար, առանց  
նշմարելու մէկը՝ որ զինքը կը լրտեսէր:

Այդ մէկն Ստեփանոսն էր, Գոմիտիլայի  
անտեսն, որ իւր սերունդն հրամանաւ փլա-  
ւիտ Եղեմեսի կողակցին ամենափոքր շար-  
ժուան իսկ աչքէ չէր փախցնէր:

Շարայարեցի



# ՀԱՆԴԵՍ ԹԱՏԵՐԱԿԱՆ

## ԽԱՂԱՄՈԼ

(Տես յէջ 314)

### ՀԱՆԴԵՍ ԵՐՐՈՐԴ

#### ՏԵՍԻԼ ԱՌԱՋԻՆ

Մմբատ. — Այ՛, ճիշդ է, ուղիղ է  
մտածմունքս, և սէտք է զործադրեմ... ալ  
ինձի կարելի չէ Ռոստով մնալ. կը մեկնիմ  
կ'երթամ Բագու, կ'երթամ որդիական ա-  
զօթքիս պարսքն հասուցանելու ինձ հօրս  
կայքը արբելով եւ յաշագիւն) գերեզմանին վը-  
րայ. և յետոյ եթէ հօրէս մնացած կարգա-  
դրելիք գործեր կան՝ կը կարգադրեմ, և  
զուցէ այն տեղ և կամ տրիշ քաղաքի մը  
մէջ Ապուստօ ինձի յաջող գործի մը զուտ  
բանայ... Այ՛, մնալու ալ անկարելի է,  
մնալ և Գարեգինին ըրած գործերը և բըռ-  
նած ճամբան տեսնել՝ կարելի չէ. լաւ է  
որ ես մեռնիմ անօթութենէ քան թէ պա-  
տիւս մեռնիս: — Ունեցած կարևոր պատ-  
րաստութիւններս պէտք է տեսնեմ ու մեկ-  
նիմ. Թարս... քայքայ Ծախ Թարսի հետ  
կ'ազգեմ խօսիլ և այդ անպիտանին ալ վեր-  
ջին խօսքը ըսել: Թարս... Եւ... Եւ...

#### ՏԵՍԻԼ ԵՐԿՐՈՐԴ

#### Մմբատ և Թարս

Թարս. — Հրամեցէք, պարոն Մմբատ  
Մմբատ. — Կարճ խօսք մ'ըսելիք ու-  
նիմ՝ քեզի, Թարս. կը տեսնեմ ցաւօք սրտի՝  
որ դուն մեր տանը պատուոյն ամենեկին հող  
չունիս. քանի որ ինձ հայրս այս տեղ էր՝  
քեզմէն աւելի ուշադիր և խնայող ծառայ չէր  
գանուեր: Իսկ այս վերջին երեք տարինե-  
րուս մէջ՝ կարծես զուն մեր տանը երդուեալ  
թշնամին դարձեր ես...

Թարս. — Պարոն Մմբատ, Բնշ կ'ը-  
սէք, միթէ կարելի է որ...

Մմբատ. — Խօսքը մի կտրեր, Թարս.  
մի ուզեր զուր տեղ զքեզ արդարացընելով  
սուտ խօսիլ. ես որ բան մը կ'ըսեմ՝ առա-  
ջուց հազար կը դիտեմ, հարիւր կը քննեմ  
և հարիւր ալ կը մտածեմ, և յետոյ հազ-  
թէ մէկ անգամ կ'ըսեմ... Թարս, կարելի  
է որ դուն ինձի թշնամի չըլլաս, որովհետեւ  
քեզի չարիք մը չընելէ զատ՝ միշտ ալ ձեռ-

քէս եկած բարիքն բոքեր եմ... բայց դուն  
Թշնամի ես խեղճ Գարեգին եղբորս...

**Յարօ.** — Գարեգինն... Բնչ կ'ըսէք,  
պարօն Սմբատ, զձեզ խաբած են, միթէ  
կարելի է...

**Սմբատ.** — Հանդարտ կեցիր, Յարօ,  
ըսելիքս Թող լընցնեմ. լսէ... Ես որ մինչև  
այսօրս այս տանը մէջ կեցեր էի՝ խեղճ հօրս  
ցաւ չպատճառելու և հնազանդելու համար  
չէի բաժնուիր երթար. և դարձեալ կը յու-  
սայի մէկ կողմէն Գարեգինը խրատելով իր  
չար ճամբաներէն և մանաւանդ խաղալէն  
ես կեցընեմ, և միւս կողմէն ալ հայրս հա-  
մոզեմ որ գառնայ գայ և տունն ու զմեզ  
այսպէս երեսի վրայ չթողու, և եթէ ուրիշ  
ճար չըլլայ՝ երկու եղբարցս ժառանգութիւնը  
բաժնէ, և ինծի խնամակալ լինի մինչև ի-  
րաւունքի տարիքս հասնիչ, որպէս զի ան-  
կէց վերջը Գարեգինի մեղքն իր վզին մնայ՝  
իմն ալ իմ վզիս. և ոսմիկն ալ զիս շիւ-  
ղադրէ եղբորս պատճառաւ՝ թէ « իրենց  
հօրերնուն քրտինքով վատարկուած զիզուած  
ամբաւ հարստութիւնը՝ քանի մը տարուան  
մէջ վատնեցին ու փողոցի մէջ մնացին »...  
Բայց հիմայ որ Աստուծոյ կամքն ուրիշ կերպ  
ուզեց, և խեղճ հայրս ձեռքէս ալ զլխէս ալ  
վերցոց, ու հարկ պիտի լինի ժառանգու-  
թիւն ունենալու համար՝ դատաստանի դիմեմ  
և հակառակութիւն ծագի իմ և եղբորս մէջ,  
ես աւելի լաւ կը համարիմ (գիտնալով մա-  
նուանդ թէ եղբայրս պարտքերու տակ խղ-  
ղուած է) ամէն բանէ ձեռք քաշել, և ես  
իրար ալ հեռանամ երթեմ ուրիշ տեղ Աս-  
տուծով ինծի դործ որ բախտ շինեմ... Հե-  
ռացած ժամանակս ուրիշ ցաւ չունիմ՝ բայց  
միայն կը ցաւիմ Գարեգին եղբորս վրայ,  
կը ցաւիմ մանաւանդ խեղճ Միհրանիկին վը-  
րայ... Դուն, Յարօ, գիտեմ որ Գարեգինի  
սրտին ու մտքին վրայ տիրեր ես, բայց կը  
սեսնեմ որ դուն փոխանակ զինքը խրատե-  
լու և իւր բռնած վաս ճամբէն ես կեցընել  
ջանալու, ընդհակառակն դուն իրեն կ'օգնես  
և նորանոր ճամբաներ կ'ուցընես... Դուն  
քու շահուտ միայն կը ծառայես, Յարօ, և  
այն ալ շատ անխիղճ կերպով: Եթէ ես լի-  
նէի այս տանս մէջ հրամայողն՝ զքեզ շա-

տունց հեռացուցած կ'ըլլայի քովէս. քանի  
մ'անգամ ըսի եղբորս, բայց ինքը զիս իրեն  
Թշնամի կը կարծէ և զքեզ բարեկամ և  
հաւատարիմ... Չեղբէս եկածն բրի եղբորս՝  
բայց յարգս չճանչցաւ. ուստի հիմա հարկ է  
որ բաժնուիմ հեռանամ իրմէն, և ակամայ  
Թողում զքեզ իւր մօտը, քու կամքիդ և  
շահիդ ալ զինքը խաղալիք մը Թողում...  
Քայց վերջին խօսք մ'ալ պիտի ըսեմ քե-  
զի, Յարօ, միտքդ պահէ ու դողա՛... « Յի-  
շէ, յիշէ, Յարօ, որ Աստուած արգար է,  
ուշ կամ շուտ իր վրէժը կը յայտնէ շարե-  
րուն դէմ... ու պողո » : (Տաքոնքեանք կ'ելնէ) :

ՏԵՍԻՆ ԵՐՐՈՐԿ

**Յարօ.** — (Պաղարիւն դիտելով Սմբատի  
մեկնիչը մանրորպ մի) — Գնա՛, անփորձ պա-  
տանի, զնա... ես քու սպառնալիքներէդ ալ  
չեմ վախեր՝ քանի որ այս (ցոյցընելով իւր  
ուղեղը) վրաս է և աչքերս ալ չորս բացեր  
եմ... Անշուշտ քիչ ատենէն կ'իմանաս զըլ-  
խուդ գալիքը, բաւական է որ Մուշեղի  
պաշտոյնիս սրբանքը դրած նամակս, որ պա-  
րօն Գարեգին շատ լաւ ու կատարեալ կեր-  
պով ձեւացուցեր է քու գրիդ նման՝ գատա-  
ւորաց ձեռքն ինկնայ ու կարգան. և անտա-  
րակցոյ կ'իկնայ, որովհետեւ ամէն բան Բնչ  
կը վերաբերէր Մուշեղին՝ աւերութիւնը ա-  
ռաջին վայրկեանին ժողովեց ու կնքեց. այն  
նամակով գատաւորք պիտի հաստատեն ոչ  
միայն Մուշեղի գողութիւնը, այլ նաև  
Սմբատի գողակեց ըլլալը. և մինչդեռ Մու-  
շեղն ու Սմբատ բանտին մէջ փառտին, ես  
ու Պարօն Գարեգին այդ ձեռք բերած փո-  
ղերնիս մեր հանոյեց պիտի բանեցընենք...  
Այն ատեն դուն ալ կ'իմանաս, Սմբատ,  
թէ քու Թշնամիք Յարօն զխուզ Բնչ խաղեր  
կրցաւ խաղալ ու դեռ ալ պիտի խաղայ...  
վասն զի շահն այդ կը պահանջէ... Այո՛,  
շահն կը պահանջէր որ Գարեգինը վախ չու-  
նենայ իր հօրը այս տեղ վերադառնալէն, որ-  
պէս զի աւելի արձակ համարձակ վատնէ  
ցրուէ, որով ես ալ աւելի վատտակ ունե-  
նամ. անոր համար մուրացկանի մը ձեռքով,  
քանի մը կարեկ սև փողով հարիւրաւոր մա-

նէթներու դու բացի ինծի՝ Հրանդին սուտ մահը հրատարակելով... Իմ շահուս համար պէտք էր որ Սմբատն ալ դպրէր իւր հօր նամակներ գրելով՝ գրգռելու որ շուտով դառնայ գայ. ուստի սուտ ծանուցում մը Հրանդի մահուան մասին՝ քաղաքիս տպարանի մը մէջ ուզածիս պէս տպել տալով՝ դրկեցի Բագու բարեկամներէս մէկուն՝ որ փօշտի ձեռքով գաքազնիէ այս տեղ ուղարկէ Սմբատի հասցէին, որպէս զի Սմբատ ալ նամակ չգրէ իր հայրը մտած կարծելով... Իմ շահուս համար՝ երբ տեսայ որ Սմբատ ընդհակառակն որչոր է որ անձամբ Բագու երթայ նաև հօրը մահուանէն յետոյ, և հոն երթալով՝ պիտի իմանայ որ հայրն ողջ է և այն մահազոյծ թուղթն սուտ է, հարկ եղաւ որ զօրաւոր արգելք մը հանեմ՝ որով ամենին հնարք չունենայ Սմբատ Բագու երթալու. մանաւանդ թէ երկու թռչուն մէկ գնտակով զարնելու համար՝ մտածեցի Գարեգինի կորուստը իր առջև դնեմ, զարհուրեցնեմ, և համոզեմ ու ստիպեմ զինքը որ Սմբատի գէմ ինծի հետ գաւակցութիւն ընէ, նախ 3000 մանէթ տերութեան թըղթադրամ ճարտար հնարքով մը Մուշեղի պաշտօնական սենեկէն թոցընելով, (որ փառաւորապէս յաղողեցան), և երկրորդ՝ Սմբատի գիրը ձևացընելով նամակ մը շարադրել և գրել ալ Գարեգինի իբրև Սմբատի բերնէն առ Մուշեղ գրուած, որ նոյնպէս շատ լաւ յաղողեցաւ, և ես ինքն այդ նամակը կրցայ գողութեան օրը Մուշեղի գրպանը ձգել զաղանի. որով Մուշեղն ու Սմբատը քննութեան մէջ պիտի բռնուին և յանցաւոր ճանչցուին, դատապարտուին և բանդ զուտին, որով իմ շահերուս փաստը մը չըտնուի... Բայց Սմբատի սպառնալիքը... « Աստուած զրէժ պիտի խնդրէ »... Է՛հ, ինչ կը մտածեմ. կարծես Աստուած ուրիշ բան չունի՝ իմ ըրածներուս ոչ պիտի դարձընէ... Ո՛հ...

ՏԵՍԻՆԷ ԶՈՐՐՈՐԴ

Հրանդ (յանձաւօրս) և Յարօ

Հրանդ. — Ա՛յս է պարօն Գարեգին Հրանդովի տունը:

Յարօ. — Հրամեր էք, այս է. ինչ կը փափաքէք, պարօն:

Հրանդ. — Ոչինչ. կը փափաքիմ՝ զինքը տեսնել:

Յարօ. — Բայց զուք մ՛ը էք, պարօն, ինչ ըսելիք ունիք. կրնա՞ք ինձ ըսել որ երթամ իմացընեմ:

Հրանդ. — Իս Գարեգինը կը ճանչեմ և ուղղակի իրեն հետ գործ ունիմ, որ դրամական խնդրոյ մը վրայ է:

Յարօ. — (ժածոռի. — Ո՛հ, հասկըցայ, անշուշտ պարտատէրներէն մէկն է, փող ուզելու եկած է. պէտք է ճամբայ դրնել...) Ներեցէք, պարօն, տէրս Գարեգինը սուներ չէ և չեմ ալ գիտեր ի՞նչ կու գայ. խնդրեմ ուրիշ ժամանակ հաճեցէք ներկայանալու, կրնայ ըլլալ որ այսօր շատ ուշանայ...

Հրանդ. — Փոյթ չէ, ես ուրիշ ստիպողական գործ չունիմ. իրեն հետ ունեցած գործս ամենէն աւելի կարևոր գործս է. և որովհետև չեմ գիտեր թէ մէկ մ՛ալ երբ կարող պիտի ըլլամ իրեն հետ տեսնուելու, որովհետև ճանապարհորդ եմ, ուստի այս տեղ կը մնամ մինչև Գարեգինի տուն գառնալը...

Յարօ. — Բայց... ներեցէք, պարօն... ես շատ գործ ունիմ, չեմ կարող ձեզ մօտ մնալ... լաւ կը լինէր եթէ ուրիշ անգամ...

Հրանդ. — Իմ այստեղ մնալս քու գործերուդ արգելք չի լինիր, դու կարող ես զիս միայնակ թողուլ. մի վատեր, գող չեմ որ...

Յարօ. — Թողութիւն ըրէք, պարօն, այդ չէի ուզեր ըսել. մնացէք այստեղ որչափ կը փափաքէք. ես իմ գործերս կատարելու կ'երթամ... Գարեգինի եղբայրը՝ պարօն Սմբատը պիտի մեկնի և պէտք է ճամբու պատրաստութիւնը տեսնեմ... ներեցէք պարօն. (ժածոռի). — Տարակոյս չկայ պարտաւէր մ'է): — (կը մեկնի):

ՏԵՍՒԼ ԼԻՆԳՎԵՐՈՒՄ

Հրահնդ. — Մեծոք Աստուած... Ինչ կը լսեմ... Միմտը պիտի մեկնի... ս'ը ար-  
 զեօք, արդեօք ինչս' համար... ս'հ, անշուշտ  
 ծանր պատճառ մը կայ իր մեկնելուն, թէ  
 չէ՛ Միբասս, միշտ ինծի հնազանդ, հլու և  
 սիրելի եղած որդիս, իմ զբաժներէս իմ  
 խօսքէս զուրս չէր ելլեր, իմ մէկ հրամանէս  
 կամ փափարէս չէր անցնել... ս'հ, չէ,  
 կարելի բան չէ... Միբաստ, սիրեցեալ որ-  
 դեակդ իմ Միբաստ, հայրդ եկեր է զքեզ  
 գտնելու և զրկելու, իսկ զուն պիտի մեկ-  
 նիս... անշուշտ քեզի չմանող անզգամ  
 եղբորդ ձեռքէն կը փախչիս... Ա'իս, ան-  
 զութ, անողորմ Գարեգին, ահա երեք տարի  
 է որ ես քու ամօթալից վարքիդ ու անիծած  
 խաղիդ և անպիտան խաղակիցներով պատ-  
 ճառաւ՝ սրախ ցաւէն հեռացիր եմ՝ տնէս,  
 քաղքէս, բարեկամներէս, որդիքներէս ու  
 թոռներէս, և Բագուի նաւթի գործասներու  
 զարդահոտութիւնն ու զզուելի կեանքը՝ վե-  
 րապատ եմ համարեր Ռոստովի մէջ իմ ու-  
 նեցած պատուաւոր մարդու, իշխանի մը հան-  
 գիստ ու մխիթարական կեանքէն... Ա'իս,  
 ինչ չըրի, Գարեգին, ինչ մնաց որ չընեմ  
 զքեզ երջանիկ ու բախտաւոր բնելու հա-  
 մար... իսկ զուն, ապերախտ և անարժան  
 որդի, ինչ պակաս մնաց զեռ որ չընես՝ իմ  
 անունս, տունս, աշխատանքս, որդիքներս,  
 ստացուածքներս, իմ ամէն ինչս անպատիւ  
 ընելու համար... Ոչ հայրինի խրատներս,  
 ոչ աստս, ոչ սպառնալիքս ու պատուհաս-  
 ներս՝ չիրցան զքեզ ճամբու բերել... Մ'ասա-  
 ծեցի թողու զքեզ հեռանալ, որ գէթ հե-  
 աւուր սրտախոց հօր մը յիշատակը՝ թմրած  
 սրտիդ սէրն արթնցնէ, մտած խղճմտան-  
 քիդ յարութիւնն ապ... բայց արտոն, ընդ  
 հակառակն զուն քու յիմարութիւնդ ծայրա-  
 յեղութեան տարիք, տասը՝ հարիւր ըրիր,

հարիւրը բիւր ու բիւրը միլիոն, շարութիւն-  
 ներդ կամաւոր կուրութեամբ անչափ աւել-  
 ցուցիր... բայց ես եկած եմ վերջին փորձ  
 մ'ալ բնելու, որով կամ վերջ տաս խաղա-  
 լուդ, ետ զառնաս անզգամութեան ճամբը,  
 և կամ հայրական անձքս օրհնութեան սեղ  
 զլիտու թափելով՝ զրկեմ զքեզ բոլորովին  
 ժառանգութենէս, և առաքինի Միբասս օ-  
 բիհաց ձեռքով իմ մէկ հատիկ ժառանգս ու  
 որդիս հրատարակեմ... Եկած եմ գաղտնի  
 և բոլորովին կերպարանափոխ եղած, ծած-  
 կուած եմ՝ շճանշուշու համար, բայց տունս  
 մտնող ելլողները մտանոց ճանաչելու հա-  
 մար (քրեկ կը հասեկ ճայնափոխ զպակասկը՝  
 բնական ճայնով շարունակելով խօսքը) այս  
 զսպանակով՝ իբրեւ ակնոց դրած՝ կեղծած եմ  
 ձայնս՝ որդիքներէս ու ծանօթներէս անյայտ  
 մնալու համար, սպիտակ մորուքս սե նիկեր  
 եմ՝ որ շլինի թէ կասկած տամ մէկուն...  
 Երեք օր է որ քաղաքիս մէջ կը գտնուիմ  
 և զեռ մէկու մը բնու զիս շճանշալը՝ նշան  
 է որ լաւ այլափոխուեր եմ... Միբասս է  
 խօսիլ Գարեգինին՝ իբրեւ իրեն հօր ծանօթ  
 բարեկամ մը, նեղն ինկած ատեն՝ բարիք  
 ընելով իրեն՝ առատ փող տալ, պայմանաւ  
 որ անիծած խաղէն ու խաղի ընկերներէն  
 հեռու կենայ... Արդէն Միբասս ինծի զերե-  
 էր որ Զ'ուտ Պապային վեցհազար մանե-  
 թէն աւելի պարտք ունի Գարեգին, և գրա-  
 ծին համեմատ այսօր կամ վաղը վճարման  
 օրը պիտի ըլլայ, ուսկից պիտի վճարէ...  
 կը գուշակեմ որ տունն ու տեղը պիտի գրա-  
 ւեն և կամ զինքը բանդ պիտի ձգեն՝ թէ  
 որ չօգնես իրեն հատուցանելու... ս'հ, լաւ  
 է որ ես ամէն բան կորսնցնեմ՝ քան թէ  
 որդիս բանս զնեն և տունս վրասահմարա-  
 ւեն... բայց ահա մարդ կու գայ... ծած-  
 կուիմ և ձեւանամ (զպակասկը կը հաստատե-  
 քիրը)... Աստուած, զուն ինծի զարութիւն,  
 համբերութիւն և յաջողութիւն տուր...

Շարայարեթի